



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ա. Խ. Տ.

ԼՈՒԺՈՂԿՈՍՆԻ ԿԱԴՐԵՐԻ ՄԵԼՏՈՐ  
ՀԵՓԱԿԻ ՈՒՍՏԻՑՄԱՆ ՄԵՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՏԵԽՆԻԿՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ՅԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԽԿՈՒՐԾ

1931/32 ՊԻՍ. ՏԱՐ

Հասցեն

Ճրջուն

Դիմութ

Մարիս

Հակ.

• թ

491.99(07)

2-53

Էրևան, 1 հանու № 32, Զաочны Պедагогический  
Техникум.

491.99(07)

2-53

11.06.2013

10.3561/2

18 MAY 2010

այ

GB

Ա. Քաջատրական ներածություն

Լուսժողկոմատի մանկավարժական հեռակա տեխնիկումի լեզվի և գրականության ուսուցման նպատակն է, վոր տեխնիկումն ավարտող մանկավարժ ուսուցիչը հմուտ լինի մաքուր գրական բարբառով արտահայտվելու (թե՛ գրավոր և թե՛ բանավոր) և ըմբռոնելու մեջ (բառերի և ձեվերի պաշար, գրական յերկի իմաստաբանական, սոցիալ-պատմական և գրական վերլուծություն) :

Այս նշանակում է, վոր տեխնիկումն ավարտողը պիտի 1. կարողանա ստացած լեզվական ունակություններն ոգտագործել աշխատանքի պլանավորման, արձանադրման և աշխատանքի լեզվական ձեվավորման համար (կազմել զեկուցումներ, զեկուցագրեր, հաշվետվություն, նկարագրություն, հաղորդագրություն) . 2. ունենա գրական լեզվի տիրապետման ունակություն (զեղարգեստական, զիտական-դորձնական և լրագրային մատերիալ) . 3. կարողանա պայքար տանել հնի մնացորդների դեմ (հակակուլակային, հակակրօնական, ինտերնացիոնալ կամպանիաներ) և մասնակցել նոր կյանքի շինարարության, վորը պահանջում է պրոլետարական գտասակարգային տրամադրվածություն : Այս վերջին նպատակի իրագործման համբարձուատիրական մեջ նշանակություն ունի գեղարգեստական գրականության ուսումնասիրությունը : Յետ-հեղիոփոխական, գրականությունը (իր լավագույն նմուշներով) պիտի տա իդեոլոգիական և եմոցիոնալ լիցք : «Սովորական գաղաքարդայնորեն սպառազինել թշնամու ուժերը վերջնականապես հաղթահարելու և հեռու պահել մանր-բուրժուական տրամադրությունների վարակումից» . (Խորհուրդների համամիտության 16-րդ համագումարի վորոշում) :

Ինչ վերաբերվում է նախա-հեղափոխական կլասիկ գրականության, ապա նրա տարրերին չյենթարկվելու և այն տիրապետելու համար հարկավոր և մշտկել պրոլետարական դաստկարգային վերաբերունք զեպի գրականությունը : Այդ նշանակում է հաղթահարել այն հետադիմականը, վոր կա անցյալի գեղարգեստական յերկերի մեջ և վերցնել այն, ինչ նրանք կարող են տալ :

Իսկ նրանք կարող են տալ հետեւյալը .

ա) դրանց միջոցով կճանաչենք պայքարող հին դաստկարգերի առաջադիմական ձգտումները, բ) նյութ՝ հասարակական-պատմական կյանքն ուսումնասիրելու, գ) ուսանողի համար շոշափելի յեն դառնում մարքսիստական գրականագիտության թեզերը գեղարգեստի՝ վորպես հասարակական կյանքի դործոն աղդակելի

մասին, դ) ուսանողը ծանոթանում ե գեղարվեստական նմուշներին, վորոնք այս կամ այն դասակրգի գրականության վճռական գիծն են պատկերացնում։

Վերոհիշյալ 3 նպատակներից բացի լեզու ավանդողների համար անհրաժեշտ ե նաև լեզվական ունակություններ լեզվագիտուրեն հիմնավորել, այսինքն՝ կարենալ բացարել, թե ինչու բառերն այս կամ այն ձևական փոփոխությունն են կրում (հնչյունաբանություն, բառակազմություն, թեքում), բառերն ինչպես են կապակցվում իրար հետ (շարահյուսություն) և ինչո՞ւ։

Թված չորս նպատակներն իրադորձելու համար մենք պիտի ուսումնասիրենք թե՛ բանավոր և թե՛ գրավոր լեզուն, կատարենք լեզվի յերեվությունների դիտողություն, յեղակացություններ հանենք և մեր յեղակացությունները կերպենք մեր լեզվի մեջ։

Մյուս կողմից պիտի ուսումնասիրենք գրական յերկեր, յենթարկենք նրանց վերուժության և այլպիսով ձեռք բերենք գրական յերկն ըմբոնելու ունակություն։

Լեզվական աշխատանքի հիմնական տեսակներն են։ 1. բանավոր խոսք (արտահայտվել, պատմել). 2. գրավոր աշխատանքներ. 3. գրական յերկի վերլուծում. 4. վարժություններ, վորոնք արթնացնում և ամրացնում են խոսքի զգացումը և գիտակցումը։

### Բ. Աշխատանքի կազմակերպումը

Հեռակայողը պիտի ունենա մեկ հատ «Արածադրությունների շահման տեսար», վորի մեջ պիտի գրավոր ձևակերպի առաջադրության բոլոր հարցերի պատասխանները և հանձնարարությունները։ Նախքան առաջադրության գրավոր մշակման անցնելը, անհրաժեշտ է ամրող առաջադրությունն ուշադրությամբ կարդալ, բանավոր պատասխանել դրված բոլոր հարցերին, պարզել մութկետերը և առա միայն սկսել գրել։ Պատասխանները պիտի ձևակերպել թե՛ արտաքին և թե՛ ներքին բոլորանդակության տեսակետից պարզ։

Ընթերցանության ժամանակ ձեռքի տակ պիտի ունենաք թուղթ և մատիտ կարենոր կետերը դուրս դրելու կամ ձեր դիտողությունները գրվածքի այս կամ այն հատվածի վերաբերյալ նշանակելու համար։

Տետրի առաջին յերեսում պիտի գրել առաջադրության մշակման ընթացքը։ Այստեղ պետք ե գրվի, թե վորքան ժամանակի համար և արված լեզել առաջադրությունը, հեռակայողը քանի ժամ և հատկացրել մշակման գործին, վոր կետերն են դժվարություն հարուցել, վոր կետերն են հետաքրքրական կամ ձանձրակի յեղել, ինչ տիպի հարցեր կամ հանձնարարություններ ե ցանկանում հետազա առաջադրությունների մեջ և այլն։

### ԱՐԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Այս առաջադրության նպատակն ե ուսումնասիրել պրոլետարական բանաստեղծ՝ նայիրի Զարյանի «Խուշանի քարափը» պոեմը, վորը նվիրված ե կոլտնաշարժման առաջին խոչըր վերելքի շրջանին մեղ մոտ՝ Հայաստանում։ Այստեղ կտեսնեք դասակարգային պայքարի սրում դյուզանտեսության կոլեկտիվացաման վերելքի շրացնում, հին և նոր կյանքի հակադրումն, դասակարգային հարաբերությունները դյուզում, կերպարանափոխվող գյուղի պատկերը։ Հեղինակը դուրս ե քերել հասարկական տարրեր շերտերի ներկայացուցիչների, տվել ե նրանց պայքարի, գործության մեջ։

Վորեւ գրական յերկ ուսումնասիրելու համար հարկավոր ե նախ քաջ ծանոթ լինել նրա բովանդակությանը. այդ՝ առաջին և ամենաանհրաժեշտ պայմանն ե։

Ուշադրությամբ կարդացեք առաջադրության վերջում բերված պոեմի հատվածները, ապա դրեք յուրաքանչյուրի խիստ համառոտ բովանդակությունը։ Այդ աշխատանքը կատարելուց հետո կարող եք անցնել ներքոհիշյալ խողիբների ուսումնասիրության։

#### I. Մաս. — Պիեմի սոցիալ-պատմական բավանդակությունը

1. Պատմական ի՞նչ ժամանակաշրջան ե արտահայտված այս պոեմում։ Նկարագրեք դասակարգային պայքարը գյուղում։ Կույակային՝ ի՞նչ պրովակացիա յե տարածվում գյուղում կուլեկտիվացման վերելքի շրջանում և ինչո՞վ ե բացատրվում այդ յերեղութը։ Պայքարի ուրիշ ինչ ձեւերի յե դիմում կուլակությունը այդ շրջանում։ Կուսբջիչի տարած պայքարը։ Նկարագրեք կուլակաթափումը։ Տվե՛ք 7-րդ դլիում զուրս բերլած ժողովի պատուի ուժերի ին այստեղ իրար հակադրվում։ տվե՛ք հակադրվող ուժերի նկարագիրը։

2. Տվե՛ք կերպարանափոխվող գյուղի պատկերը։ Ուշադրություն դարձեք հատկապես այն հատվածի վրա, վորտեղ նկարագրված ե աշխատանքը մարմարի հանքերում։ Գծեցեք նոր հովի դիմանկարը՝ հակադրելով նրան հին հովին։

3. Սերմաղուման կամպանիան, վորպես կուլեկտիվացման մի մոմենտ, ինչպես ե անդրադաւնում գյուղացիների հովերանության վրա։ սերմաղում մեղենայի չուրջը հավաքված գյուղացիների խոսակցությունից ի՞նչ յեղբակացություններ կարող եք հանել։

4. Տվե՛ք Սեանի տան նկարագրիր. այդ հետաքրքրական ե այն տեսակետից, վոր այստեղ տեսնում ենք հին և նոր կենցաղը կողքի. հին մասցորդները դեռ կան, յերբ հաղթական ներս ե մտնում նորը. «Մի կարասի ուշը գնաց»։ «Են պրիմուսը ուրախ ինդաց»։

|| Մաս .— Պոեմի գրական բովանդակությունը

1. Զորացրված կարմիր-բանակային Ալեքսանը ինչպե՞ս ե անդարձառնում դյուղի կոյեկտիվացման հարցին, ինչպե՞ս ե կովում հին սովորութիւնի դեմ՝ առաջնին զլիսից բերեք միքանի նմուշ, վորոնք բնարուցնեն Ալեքսանին, վորպես գյուղի առաջադեմ տարրի:

2. Տվե՛ք Ալեքսանի՝ վորպես նոր կյանքի համար ակտիվ պայքառողի՝ պատկերը. թվե՛ք այն բոլոր մոմենտները, վորտեղ նա հայտնաբերում ե իրեն վորպես այդպիսին:

3. Ալեքսանի դասակըզային գիրքավորումն ինչպե՞ս ե անդրադառնում նրա ընտանեկան և ասձնական կյանքի վրա. ի՞նչ տարակուսանք ե ապրում Ալեքսանը, ի՞նչ վճռական նշանակություն ունեցավ նրա համար խոսակցությունը Գարսեվանի հետ:

4. Գծեցե՛ք Հովաս քեռու հոգեբանությունը, վորպես միջակ դյուղացու հոգեբանություն՝ կոլտնտշարժման սկզբնական շըրջանում. մատնանշեք նրա մեջ սեփականատեր գյուղացու դժեր: Յե՞րբ և ի՞նչպես ե բեկում կատարվում նրա մեջ:

5. Գծեցե՛ք կոլտնտեսության նախազահ՝ Գարսեվանի (Սեանի) դեմքը: Ո՞ւմ կարելի յէ հակադրել նրան: Սերմագուման կամպանիայի ժամանակ Սեանը ինչպե՞ս ե հայտնաբերում իրեն: Նա ինչպե՞ս ե աղջում գյուղացիների վրա (բերե՛ք որինակներ):

6. Նկարագրե՛ք գյուղխորհրդի նախազահ՝ Սողոյի տիպը:

7. Զաթնանց Սանթրոսը, վորպես կուլակության ցայտուն ներկայացնեցի:

8. Նկարագրեցե՛ք հին կենցաղի զոհ՝ Արուսի բոնկումն և ընդվրզումը հնի դեմ:

Սկզբում ինչպի՞սի միջավայրի ազդեցության տակ եր գըտնավում Արուսը; Վորքա՞ն հաջող ե նկարագրել հեղինակը բեկումն Արուսի մեջ:

9. Տվե՛ք ուսուցչուհու դիմանկարը:

10. Ուշադրությամբ կարդացեք այն հատվածը, վորտեղ նկարագրված ե վարը կոլտնտեսության դաշտում: Ի՞նչի՞ց ծագեց վեճը Հովասի և Գալոյի միջև: Ի՞նչ յեղակացություն կարող եք հանել այլ վեճից:

11. Գրե՛ք և արտագրե՛ք այն կտորը, վորտեղ հեղինակն աշխատում ե ցույց տալ, թէ ինչպես դասակարգային պայքարի շըրջանում, արտադրական նոր հարաբերությունների ստեղծման հետ ստեղծվում ե նոր հոգեբանություն:

12. Ի՞նչո՞ւ յէ հեղինակը հաղթական անվանում կուլակի ձեռքից ընկած Ալեքսանի արյունը:

Նոր կյանքի վրա մի մի աղյուս դնող՝ յերկու ի՞նչ դեպք պատահեց Ալեքսանի մահից հետո:

III Մաս .— Նկարագրեցե՛ք կոլտնտշարժմ. ընթացքը ձեր շրջանում, գյուղում. գրեցե՛ք ձեր դիմողություններն այդ ըրջանից. բերե՛ք դասակարգային պայքարի փաստեր:

Վորքա՞ն հարազատ ե դբված այս պոեմում այդ ամբողջ շարժ-

ման նկարագրելը, այս կամ այն սպասկերը: Գրեցե՛ք թե վո՞ր պատկերն ե հատկապես ձևով գուրը գալիս և ի՞նչո՞ւ: Կոլտնտշարժման վո՞ր կողմերն են տրված լրիվ, ցայտուն և ընդհակառակը՝ վոր կողմը թերի, ըլուսարանված:

Մասորություն .— Եթե 1 և II մատերում գետեղված հարցերին պատասխանելիս կդառնեք տվյալ խնդրին վերաբերող խիստ բնորոշ հատված, մատախառվ նշանակե՞ք և արտադրե՞ք այդ հատվածը ձեր աետրում՝ հարցին պատասխանելուց անմիջապես հետո:

IV Մաս .— Գրական-տեսական .— Կարդացեք հետեւյալ արտահայտումը. «Մտերիմ աչքերի նման հեռվից կայծկլտում ու սիրտ են տալիս ելեկորական լույսերը նրան»:

Այստեղ բանաստեղծը հեռվից յերկացող ելեկարական լույսերը համեմատում է մտերիմ աչքերի հետ: Արտահայտվելու այդպիսի յեղանակը (պրիոմը), յերբ հեղինակը մի վորեն առարկակամ յերեսույթ համեմատում է մի ուրիշ առարկայի կամ յերեսոյթի հետ, կոչվում է համեմատության կամ պատկեր:

Այստեղ բերված համվածներից արտադրեք միքանի այդպիսի պատկեր:

V Մաս .— Լեզվական-ելերականական .— Հեղինակն ի՞նչո՞ւ յէ եր գրվածքը «Բուռչանի քարտիլ» անվանել. վորքա՞ն հարմար եք համարում այդ վերնագիրը. ուրիշ ի՞նչ վերնագիր կարելի յերդնել: Գրիմածքն իրենից ներկայացնում է մի ամբողջություն և զրվածքն վերնագիրն այդ ամբողջությունը հնարավոր մասերի և յուրաքանչյուր մասին դրեք հարմար վերնագիր. ապա վերցրեք այդ մասերից մի վորեն հատված և դանեք, թէ այնուղի քանի իրար հետ կապակցված, բայց ամեն մեկն ամբողջական միաբ կա: Որինակ՝ «Դիմամիթոն անստանում առավատայն վորուաց»: Խնձորենին ցնցվեց: Տանձինը գուղացին: Տանձենու տակ թափառող արջը փարիսի չորեցթաթ: «Ել ահ Հկա»—մոլուաց փայտ հավաքով գյուղացին»:

Քանի՞ մասի կրամանեք այս հատվածը. ի՞նչո՞ւ անպայման վեց և վոչ ավել կամ պակաս:

Այն՝ բառերով արտահայտած միտքը, վորն այլևս չի կարելի բաժանել այնպիսի մասերի, վորոնք միտք արտահայտեն, կոչվում է խոսք:

Ի՞նչպիս ե փափակում ձայնը յուրաքանչյուր խոսքի վերջում: Բացի ձայնն իջնելուց, ել ի՞նչ ե տեղի ունենում: Կանգ առնելու և ձայնի իջեցման տեղում ի՞նչ նշան ենք դնում: Գրեցեք, թէ բացի վերջակետից հետո՝ ել յերբ ենք գրում մեծատառով:

Գրեցե՛ք մեկ դիմում հեռակա տեխնիկումի վարչության, վորի բովանդակությունն առանց հասցեյադրության բաղկացած ինի չօրս խոսքից:

## «ՈՐԻՇԱՆԻ ՔԱՐՄՓԸ»

ԵՊՈՂԵՑԱ

ԳԼՈՒԽ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԵՐԱԴԱՌՈՂՈՒՄ Ե ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿԻՑ

Նա տուն եր գալիս կարմիր բանակից :  
Են բատրակ տղեն—անունն՝ Ալեքսան :  
Գրքերով լեցուն մի պարկ շալակին  
Ու դոշին կարմիր, աստղաձև նշան :  
Մի անծայրածիր աշնան յերեկո  
Փովել եր անափ զաշտերի վրա :  
Յեկ Ալեքսանի սիրութ թե առած  
Ուզում եր թուչել մաշինի հերով  
Ու առւն սլանալ իրենից առաջ :  
Նա քանի գնում, մոտենում եր տան,  
Անցնում եր ծանոթ արտերի մոտով ,  
Լցվում եր ենքան անհուն կարոտով ,  
Սիրուն անհամբեր զարկում եր ենքան :  
Կարմիր բանակից նա դալիս եր տուն ,  
Խորունի մաքերով վառված են տղեն :  
Սրում յերկու բոց, յերկու վառ յերդում .  
Շուրջը—յերեկո, մշուշ վոսկեղեն :  
Առաջին յերդումն նա անցյալ տարի  
Տվեց լաշինի չինար աղջկան :  
Թուշանի կապույտ քարափի քարին ,  
Յերբ հանդում հովիվ ու չթվոր չկար :  
— Արուս, անիլավ, չքնան մարդու ,  
Ես կգամ, հենց վոր տարին լրանա . . . .  
Ու ջերմ խոստումի կրակը սրտում  
Սիրահար աղին վերցըին բանակ :  
Նա յերկրորդ անգամ յերդվեց յեռնիկ :  
Բանակում հանդես ու միտինգ արին :  
— Ես խոսք եմ տալիս կյանքս նվիրել  
Հենիկի մեծ դաղափարին :  
Յեկ նրա քարե վեհ արձանի դեմ ,  
Նրանք յերդվեցին կովել, աշխատել  
Հենինյան կարմիր դրոշի ներքո ,  
Կուլեկտիվ պատով, կոլեկտիվ ձեռքով . . .

— Բարեկ, այս, բարեկ, ա հեր ,  
Վերջացրի, յեկա տուն :  
Վոնց եք իրար շահել պահել ,  
Վո՞նց եք ապրում, աշխատում :  
— Վա՛յ, — վեր թուան հեր ու նանի՝  
Մեկ մեկի փեշ ձիդ տալով :  
Մեջտեղ առան Ալեքսանին  
Համբուրելով ու լալով :  
Մայրը հետո թաղիք վոհեց  
Հողի խոնավ թոնրատան  
Ու կեղոտակուր բարձը գրեց  
Աղիդ հյուրի մեջքի տակ :  
— Այ մարդ, ձեն տուր, դա ինամին ,  
Յես ձվաձեղ, չայ չինեմ :  
Կտուր յելավ Հովաս ամին .  
— Դուրս յեկ, լաշին, լաշին—ե՛յ . . .  
Աղդ, Հարեւան, ընկեր, ծանոթ  
Իրար աշխույժ ձեն տիլին :  
Հավաքմեցին . . . բարի գալուստ  
Զորացրված մեր տղին :  
Հավաքվեցին հետզհետե ,  
Ով կար մոսիկ, սիրելի ,  
Բայց յեկուրի աչքերը թհժ  
Դուն մեխված են ելի :  
Ա՛խ, մեկը կա, նա չի դալիս ,  
Ա՛խ, անիծված հին աղաթ :  
Յա ել դուցի կարոտալի  
Կաց ե լինում հիմա տան :  
— Բաղդդ բերեց, Հովտս քեռի ,  
— Թեկում քեքիր, աչքու լիս .  
Տղեղ յեկավ զիրը ձեռին ,  
Արտղ դրչով կցելի :  
— Եսպես խոսել, բան հասկանալ ,  
Եսքան կարգալ, սովորել . . .  
Չուր չեն ասել կարմիր բանակ  
Խորհրդային նոր որհնը :  
Հարցեր տիլին հեռվեց հեռու ,  
Պատասխանեց նա ձեռաց .  
— Ի՞նչ կա արդյոք քաղաքներում ,  
Խաղաղություն, պատերազմ . . .  
— Վախինում են մեր բանակից ,  
Զեն կտրա դալ մեղ վրա . . .  
Շողաց աչքում հաղթանակի  
Հերոսական մի կրտկ :  
— Իսկ գու, հայրիկ, մինչեւ հիմա  
Զես ել մտել կովեկտիվ :

Յես գրել եմ քսան նամակ ,  
 Յես գրել եմ , թե՝ մտիր :  
 Եսպես ե ծարն , ես ե ձամբան  
 Դուրս զալու նեղ վիճակից :  
 Եսպես ե մեր իշխանության  
 Գիծն ու կամքը դիտակից :  
 Ի՞նչ ես ասում , կաչին առի ,  
 Ի՞նչ եք ասում հեր ու մեր :  
 Կուլեկտիվ ե խալիք հիմք ,  
 Վախտը մերն ե , հերթը մեր :  
 Զեռքը տարան ծոծրակներին  
 Տիրեց խորին լուրթյուն ,  
 Մեջքը քորեց Հովաս քնուին  
 Ու յետ դարձավ իր փորդուն .  
 — Հաստատ կենա իշխանությունն ,  
 Լավ Կոս ասում , վորդի ջան .  
 Մեղ համար ե դիմ աշխատում ,  
 Հո չե՞նք լինի դավաճան :  
 Վարկ ել տվավ անցյալ տարի ,  
 Յես ել առի մի աշառ .  
 Դու ել յեկար , դալդ բարի ,  
 Դու ել , կարսա , մի հատ ա՛ռ :  
 Եզուց ելոր դարնան վարին  
 Չութ կլծեմ սեփական :  
 Դու ուրիշ մարդ , կարսա , ճարի ,  
 Յես — չքավոր , յես հա կամ :  
 Մանկությունից Հոտաղ , մշակ ,  
 Տկլոր , անտուն ու անտեր .  
 Իշխանության արևը շատ ,  
 Ինձ դարձեց յեղան տեր :  
 Վո՞նց եմ շահել , վո՞նց եմ պահել  
 Քորիա ջահել եկ դանեն .  
 Եսկ դու եսոր վեր ես կարել ,  
 Թե կուլեկտիվ կտանեմ :  
 Թույլ տուր , վորդի պարզաբանեմ .  
 Համաձայն չեմ եկ բանին .  
 Յես չժած յեզս տանեմ ,  
 Խալիք քշի սպանի՞ ...  
 Թույլ տուր , ախր , ինքս լծեմ ,  
 Մուրազս առնեմ մի տարի ,  
 Հետո ինքս ել չեմ լինի դեմ ,  
 Առ տար ու տուր ոտարին :  
 Վերջացրեց Հովաս քեռին  
 Մեջքը կրկին քորելով ,  
 Հետո նայեց ներկաներին  
 Տարակուսած ու մոլոր :

— Ի՞նչ եք ասում հարկաններ ,  
 Ի՞նչ ես ասում , ա կաչին ...  
 Լաշինը լուռ զլուխն առել ,  
 Կախ ե արել առաջին :  
 Խոսքը կալավ թելում Բաշին ,  
 Քիթը սրբեց գողնոցով :  
 Ու աշքերում չողջողացին  
 Յերկու կաթիլ յերկու ծով :  
 — Ալեքսանիս ազիլ խաթեր  
 Դեմ մի զնա , այ Հովաս .  
 Խալիսի դրան շատ ես դատել  
 Ու մնացել հա սոված :  
 Կդամ վորդի , իմ՞ չհմ գալի .  
 Ի՞նչս պիտի կորցնեմ .  
 Հարսառությո՞ւն , վոչխա՞ր , խակի՞ ,  
 Բարիքով լի նոր անե՞ր ...  
 Իի՞ չեմ ուզում մարդավարի  
 Ապրեմ , մաքրեմ ու Հագնեմ ,  
 • Քաղաք էնամ ամեն տարի ,  
 Չուզողները տրաքվին :  
 Յես ել մեր եմ , վորդու տեր եմ  
 Մուրազ ունեմ իմ սրտում :  
 Ասի թառլան հարսս բերեմ ,  
 Տղիս անեմ տեղ ու տուն :  
 Հարսս բերեմ հարսանիքով ,  
 Փառք ու պատիվ տեղ լինի :  
 Ծաղով , ծախսով , թաղարիքով ,  
 Շաղ տամ արաղ ու գինի ...  
 Համ տառմ ե , համ չողոքորթ  
 Աչքով անում լաշինին .  
 Լաշինը լուռ միտք ե անում ,  
 Զի իմանում ինչ անի :  
 — Զե , այս ջան , եղ կներես ,  
 Ասավ վորդին կարմրած ,  
 Շողջողացին աչք ու յերես ,  
 Մերը սրտում թրթուց .  
 — Մուտ ե , նանի , խելքից Հանի ,  
 Հին սովորույթ , հին կենցաղ .  
 Ինչի՞ս ե պետք մեծ Հարսանիք ,  
 Արազ , զինի , ծախս ու ծաղ :  
 Մեր ունենամ լի ծիծաղով .  
 Սերն ե արազ ու գինի .  
 Մերը չեղավ , ծախսով ծաղով  
 Աւրախություն չի լինի :  
 Քեֆ չեմ անի՝ ջերս գատարի ,  
 Կեր չեմ անի յեղ ու կով :

Յարիս կառնեմ, կովսող կերթամ  
Կարմիր, կարմիր պատկով:  
Կոլեկտիվում կաղընք սիրով  
Ու կաշխատենք միտին:  
Սուր ե, այս, կուլակի խոսք,  
Ծաղով պատկ մի ասի:  
Մարդ ու կնիկ տարակուսած  
Մտիկ արին խնամուն,  
Խնամացուն ծանր Հաղաց  
Ու ասավ — Չեմ իմանում:  
Հավանել եմ Ալեքսանին,  
Խելոք, հալալ կաթնակեր...  
Կապասնք մի յերկու ամիս,  
Մինչև մի քիչ ժամանեմ:  
Ու վեր կացավ ծմբաւով,  
Լայն ու յերկար Հորանջեց,  
Ասվերն անցավ պատի վրայով  
Հոկայտկան ամպի պես:  
Ու վեր կացան ընկերները,  
Ալեքսանին սիրո տալով.  
— Նրանք — իրենց, մենք եւ մերս,  
Տեսնենք ո՞վ ե հաղթելու:

## Գլուխ II

ԳՅՈՒՂԵՐԴՐԴԻ ՆԱԽՍԴԱՀ ՍՊՇԱՆ

Նորից աշուն: Անձրեւ: Քամի:  
Չանգուն իր ճառն ե ասում:  
— Ժողով ե, հե՛յ, Լաշին ամի՞ւ,  
Չայն ե ալիս կատարածուն:  
Ու աներում, ժողովիրում,  
Փողոցներում, պատերի տակ  
Գյուղի կյանքն ե Հուղում, ըստում  
Ու շուր գալիս հիմնահատակ:

Բողոքում ե ընկեր Սողոն—  
Նախազահը գյուղխորհրդի:  
— Եսպիսի տեմպ, եսքան ժակով,  
Հրահանդներ եսքան խրթին...  
Հուպ են ալիս վերից, վարից,  
Իշխանություն ու ժողովուրդ,  
Արի, Սողոն, կառավարի,  
Ուղիղ զիժ տար ես ժողովում:  
Վոչ քուն ունեն ե վոչ Հանգիստ,  
Վոչ եւ կարդին աշխատավարձ.

Զեռ ես քաշիլ տանից, կյանքից,  
Աշխատում ես մերկ ու սոված:  
Գոնե տեսնեն, զնահատեն  
Ու խոնարհվեն քո առջին:  
Ու մի ու ամսոյ դեմքը պատեց.  
Գլուխ III

Ճանապարհին հիշում ե Արուսին, վորին հայրը  
խոստացած ե մինում տալ Սողոյին: Այժմ Սողոն ի-  
մանալով, վոր Արուսը խոսք ե ավել Արեքսանին, վրա-  
ցում ե վրեժ առնել նրանց ընտանիքից: Կուսրջիջի  
նիստում առաջարկում ե Լաշինին Հայտարարել կու-  
լակ և ձայնազրկել: Կովոզովի նախազահ Գարսելանն  
այդ առաջարկին դեմ ե արտահայտվում, բայց անց-  
նում ե Սողոյի առաջարկը: Լաշինը հուզվում է, համո-  
գում ե, Հովազը պաշտպանում ե նրան, բայց վոչինչ  
դուրս չելիս: Լաշինը Հուղած, զարազած դուրս  
ե գալիս ժողովից և զնում ե զյուղում Հայտնի կուլակ՝  
Զաթնանց Սանթրոսի հոգան:

Ու Լաշինն աշնան պղասր ամսիի պես:  
Ներս մտավ Զաթնանց Սանթրոսի հողան:  
— Այ Հայար բարո՞վ... արի՛, արի զես,  
Հենց նստիր, վոնց վոր կնստեն քո տան...  
Ես վո՞նց պատահեց, սանահեր Լաշին...  
Բաս «միջա՞կ» եյիր, նրանց «Հարազատ»,  
Հարյուր փութ ցորե՞ն... Դե Հորդ բացիր,  
Զայնազորիկ Լաշին... հա՛, հա՛, հա՛... Հաղաց:  
Ինկ «Հընկեր» փեսադ ինչո՞ւ տազ արավ,  
Քեզ չե՞ր ճանաչում, թե՞ր լեզու չուներ:  
Թողմնես ճառ ասի յերկար ու բարակ.  
«Կոմիուլ, Հա կոմիուլ, սներ, հեր ու մեր...»:  
Ել ի՞նչ գարդ սնես, սանահեր Լաշին,  
«Հընկեր» փեսադ քեզ կոմիոզ կանի.  
Ու եղ յերջանիկ կոմիոզի միջին  
Կապրիք վոնց մի տուն ու մի ընտանիք...  
Հարյուր մետրանոց յորդանի տակին...  
Հա՛, հա՛, հա՛... չի՛-չի՛... իստակ թամաշա...  
Կապրիկնեն աղամարդ ու կին...  
Եհ, նամուսն ել հո չհալա՞վ—մաշավ...  
Ես զիշեր զու իմ ինկա մոտ քնես,  
Վաղ՝ յես քո կնկա, մյուս որ՝ ուրիշին.  
Մի զիշերում տաս անգամ փոխս կընկնես,  
Բաս... զիշեր, կոմիոզ... արի ու հիշի...  
Ել ի՞նչ իմ, ի՞նչ քոն—սեփականություն,  
Ինչքան վոր կարաս, զոս տու վաստակի,  
Յերեխաներին կժողվեն մի տուն—

«Մանկական ժառը»...և կամ ուղղակի  
Կուղարկեն Սոսկով ու...Սմերիկա,  
Վոր Ամերիկան սրանց ճանաչի,  
Համ ել հին պարտքեր ունեն, պատի տան...  
Համ-համ-համ...ասա, խոսիր ե՞, լաջին;  
Լոշին ամսամած զիշերվա նման  
Կծկվել ե լուս բուխարիկի մոտ.  
Շարունակում է Սանթրոսը համառ.  
Հյուսել նրա ջուրջ իր ցանցը թունոտ:  
— Յե՞րբ կոսակեք, անահեր Լաջին...  
Ասում են փեսադ պատի չի ուզում:  
Վորոշել ե գա, աղջկադ կանչի,  
Ու ձեռից բոնած քաշ տա տանի առնի:  
Այ լավ հարանի՞ք... իսկական պատիլ...  
Պատվավոր փեսա, պատվավոր աներ...  
Ո՞վ եր եղ գրել քրիփ ճակատին,  
Եղախի որենք ո՞վ ե սահմանել:  
— Ո՞վ, Սանթրոս աղա, սիրոս մի զաղի —  
Մոլոաց Լաջին անհույս արտմությամբ:  
Ու լոհց: Հետո զուաց կատաղի.  
— Յես աղջիկ չունեմ, վոր չներին տամ:  
Բայց աթարածուխ բուխարիկի մոտ,  
Են հին «Հայրենի ոջախի առաջ»  
Նախկին որերի մանուկ հուզումով  
Հիմա չեն պատմում յերկար ու բարակ  
Հոսպիտ չարքերի և արհածարակ  
Վիշապի մասին յերեքդլանի:  
Այդ բարեն ավեց, սարելից տարավ  
Մի աշխարհացունց յերկաթե քամի:  
Ել չարք ու հերքամթ չկա սարերում  
Ու զու ել խավար մասուրում կովի.  
Յեկ հիմա այսուղ ել չի վախնում,  
Զի խելագրվում և զու մի հովիվ:  
Հե՞ վոր մանրիմ աչքերի նման  
Հեռվից կայծկլտում ու սիրս են տալիս  
Ելեկտրական լույսերը նրան  
Յեկ թանաքեռից և Յերեանից:  
Զե՞ վոր նա զիտե խանդավաս սրտով,  
Թերթում, կապելով, կարդացել ե նա,  
Վոր եղ լույս-աչքերն անվրեն հերթով  
Նրա անտառին ել կմոտենան:  
Կենեն Փշարով Քանաքեռզեսից,  
Հետո Սոլակից, Հաղթական անդարձ,  
Կենեն և խավար զիշերվա կեսին

Հեղեղի նման կմանեն անտառ:  
Եվառվեն անհաս են ժայռի ծերին,  
Ազնիվ մարմարի հարուստ հանքերում,  
Գայլ չի զիսպչի ել չար եծերին,  
Ինչքան ել նրանք արածեն հեռուն...  
Դիտե նա, վոր տեմպ ու թափ կրերեն  
Եղ լույսերն իրա հայրենի գյուղին  
Ու վաղ այստեղից զիշեր ու ցերեկ  
Ճաւալով կանցնի նա—յերկաթուղին:  
Ել չարք ու հեքյաթ չկա սարերում  
Ենվ աթարածուխ բուխարու առաջ  
Ռւրիչ հարցերի շուրջ են պտղում  
Մաքերը նոր թափ ու նոր թե առած:  
Հարցեր, այսորվա և ապագայի,  
Չոր, հարվածային, յերկաթե հարցեր,  
Հարցեր, վոր յերեկ, մյուս որ չկային  
Եյսոր մաքերի հետան են դարձել:

## Գլուխ IV

## ԶԵՐԸ ՊՂՏՈՐՎՈՒՄ ԵՆ

Իննամիտն անտառում առավոտյան վորոտաց.  
Խնձորենին ցնցվեց, տանձիները դողացին.  
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ,  
«Ել ահ չկա»—մոլուաց փայտ հավաքող գյուղացին:  
Վեր խոյացան մարմարի, լույսի կարծք կտորներ,  
Ռում թափով պարեցին ու շաղ յեկան չորս ըոլոր,  
Արձագանքը գյուղաց ու սլացավ սարն իվեր՝  
Մասերի մեջ ինդուստրիկ իր արշավը յերգելով:  
Արձագանքը գյուղաց ու սլացավ սարեսար,  
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին հոռետես,  
Ու մոտակա գյուղերին, վորպես խրոխտ մի բարբառ  
Մի նոր կանքի մարմարե արեածադ ավետեց:  
Յեկ գյուղացիք, վոր անդործ պատերի տակ պազած  
Քաշում եյին գույլասար ու ծուլաբար հորանջում,  
Վոսքի յեկան փնչալով թողած հորանջը կիսատ  
Ու զեկ անտառ նայեցին արտասովոր յեռանդով:  
Հե՞յ, կեռշինարդն ե ասին ու զնացին բանելու,  
Սակավարյուն գյուղերում բարախեց նոր մի յերակ,  
Կալ ու կուտից վերջացած՝ վերցրին լոմ ու քլունգ,  
Ամբարված ույժը զտավ նոր հուն, նոր յելք ու յեռաց  
Ենվ նրանք, վոր փախել զատ, պահվել եյին փոսերում գ

Դուրս վազեցին՝ զիրքերից գլուհ տվաղ զորքի պես;  
Աշխատանքը հոնդաց ու հանքերից քիչ հեռու  
Մութ ձորերում դլնդաց աղջիկների յերգը թեժ:

Մարմարի հանքերում Ալեքսանը  
Հանդիպում և լաշինին, վորը Ալեքսանի.  
Բարեվին չի պատասխանում: Ալեքսանը կասկածում  
է, վոր Լաշինը չի ուզում տալ աղջկան:

— Հերդ եսոր բարե չառավ,  
Սիրոս չարն և գուշակում:  
Արուս, Արուս, ճամփիս վրա  
Փորած փոս կա մի թաքուն:  
Նոր փեսա յե ճարել հերթ  
Մի թաքցնի, մի խափի:  
Մոռացել ես յերդումներդ  
Դու մուշանի քարափի:  
Իսկ յես եսպես հավատարիմ  
Յերդումի ու սիրո տեր,  
Արել եմ քեզ յերկու տարի,  
Անքուն, անհուն կարոտել:  
Քեզ եմ հիշել ամեն գիշեր  
Գահակության ժամերին,  
Հըամատարն ինձ չի տեսել  
Պոստի վրա քնելիս:  
Են քո սերն եր ինձ թև տալիս,  
Հեռվից խոսում, հորդորում.  
Չելի քնում Խորհրդային  
Հայրենիքի զիրքերում:  
Արուս, լսիր Ալեքսանիդ,  
Հորդ սարուկ մի մնա.  
Կուլակի տան հարս մի լինի,  
Հին կենցաղով մի զնա:  
Կոլեկտիվում կալրենք սիրով,  
Ու կաշխատենք միասին,  
Արի մեր նոր ճանապարհով,  
Նոր աշխարհին միացիր:  
Լաց մի լինի եղակս խելառ,  
Եղակս ահմիտ ու անկամ,  
Թույլ տուր գրկեմ մեջքդ դալար,  
Թող համբուրեմ մի անդամ...

— Թող, հերիք ե մի անի,  
Աղջիկները ձոր մասն—

Մեկ նայում են մի յանից...

Տիս կղուամ, ձեն կտամ:  
Թող ինձ, գնա քո բանին,  
Ինձ կոլեկտիվ մի տանի,  
Հերն ու մերս չեն ուզում,  
Յես անկիրթ եմ, անուսում:  
Ի՞նչ եմ անում կոլխուղում.

Հաղար թերան ու լեզու,  
Հաղար մարդու ձեռքիրին,  
Հաղար մարդու լուռ դերին...  
Յես սիրում եմ միայն քեզ,  
Յեթե սերս կհարդես,  
Ինձ կոլեկտիվ մի տանի,  
Աւրիշին կին մի անի:  
Դու ինձ անկեղծ չես սիրում,  
Ել ինչո՞ւ յես չարչարում:  
Թող չեմ ուզում, կտեսնեն,  
Այրպում են յերեսներս...

— Յեթե աղջիկ ես ուզում, կոլեկտիվ մի տանի,  
Յեթե զնում ես, գնա, աղջիկ չունեմ տալու,  
Պատասխանեց վերջնական Լաշինն Ալեքսանին,  
Թախտի վրա ծալապատիկ ծանր ծմբաւով,

Ալեքսանը վեր կացավ ու տուն զնաց տրտուի,  
Կրկին հորը համողեց.  
— Ի՞նչ ես ասում, ա հեր,  
Գեթ զու արի, մի լքի քո մինուճար վորդուն...  
Հովանն ելի իր նախկին պատասխանն եր պահել,  
— Ես մի տարի թող մնա, են աչառս լծեմ,  
Են վերի հանգը վարեմ իմ սեփական չթով,  
Հարսանիքիդ ել մի փարչ անուշ արագ դցեմ,  
Ես խարաբեն ել քանդեմ, շինեմ յերկու կտոր,  
Նոր դալ ասարի կղրվենք ամբողջ տնով տեղով:  
Կոտեկտիվին ել կտեսնենք վոնց ե իսկականում...  
Խալիսը մտիկ ե տալիս, տատանլում ե Սողոն,  
Ախր ջրին չհասած, յես ո՞ւր եմ մերկանում:

Հսւահատվեց Ալեքսանն ու դուրս յելավ տանից:  
Նա հանդիպեց փողոցում լնկեր Գարսեանին:  
Գարսեանի հանդեպ նա հարգանք ուներ շատ մեծ  
Ու պատմությունն նրան մանրամասն պատմեց,  
— Հերս ինձ հետ չի դալիս,  
Սեան, յես ի՞նչ անեմ.  
Աշուսին ել չեն տալիս,

1807  
39408

Յեթե կոլխող տանեմ :  
 Յես բանակից յեկա տուն  
 Վոնց կարմրած յերկաթ,  
 Յես բանակից հաստատուն  
 Վորոշումով յեկա :  
 Բայց տատանվում եմ հիմք,  
 Դրությունս անել —  
 Յես մի դալար ուռենի,  
 Սևան, յես ինչ անեմ :  
 Հորս մոտից մեծ սիրով  
 Կրաֆանվեմ, կզամ,  
 Բայց չեմ կարող, չեմ կարող  
 Թողնել եղ աղջկան :  
 Առաք են տվել թե յրութին,  
 Եգուց կնշանեն,  
 Նա կմարսի, նա կուտի,  
 Սևան յես ի՞նչ անեմ :  
 Տասներին թիվը լիներ,  
 Կսաղանելի նրան :  
 Պատկի որ : Ժամի մեջ :  
 Կամ թե ժամի դռան :  
 Բայց մոլորին եմ հիմա,  
 Անողնական, անել,  
 Յես ո՞ւր զնամ, ո՞ւր մնամ,  
 Ախար յես ի՞նչ անեմ :  
 — Յես այդ վաղուց գիտելի, մի վհատի, Ալեք,  
 Արի քեզ հետ միասին քո եղ ցավը ծալենք :  
 Հերոսություն չի լինի, յեթե խփես նրան,  
 «Պատկի որ, ժամի մեջ, կամ թե ժամի դռան» :  
 Նա՝ յե հերոսն խօկական, ով վոր չի կարկամի  
 Դասակարգի՛ թշնամուն, հարգածելու ժամին :  
 Ով իր վիշտը կուլ տալով կպայքարի համառ  
 Վոչ միայն իր, այլ ամբողջ դասակարգի համար :  
 Թող Լաշինի աղջկան, մենակ արի կոլխոզ,  
 Անհաջող սերն անցել ե մեր բոլորիս դիմով :  
 Ուրիշ աղջիկ կսիրես, կմոռանաս նրան,  
 Կծիծաղես զու մի որ քո թշնամու վրա :  
 Դու անցել ես բանակից, դու մերվել ես մերոնց,  
 Դու պարտավոր ես դառնալ առաջավոր հերոս :

ԿՈՂԱՌՉԱԿԱՆ ՅԵՐԿՈՒՆՔԻ ԱՂԱՂԱԿԱԲ

Հետզհետե բարձրացավ, հետզհետե աճեց  
 Կողխողական յերկունքի աղաղակը դյուղում .  
 Քաղաքն իր յերկաթեղեն բազուկները պարզեց,  
 Ու խանդավառ ոգնության հասավ ընկերուհուն ։  
 Քաղաքներից անհամար ըրիղաղներ յեկան :  
 Նրանք յեկան կենտկոմից, գործարանից, հանքից ։  
 Նրանք բերին իրենց հետ յերկաթե խոսք, յերկաթ  
 Ու ձեռ զարկին վիթխարի բեկման ավաստանքին ։  
 Նրանք յեկան, յերկաթի մի անընդհատ հոսանք  
 Քաղաքներից շարժեցին դեպի գյուղերը բոլոր .  
 Անրմաղակի մեքենան մինչև թղթ հասավ,  
 Տրակուրները անցան՝ ճամփեքը նախշելով :  
 Ու կուտակված, լունացած հարխածային վոգով  
 Նրանք գյուղերը մտան, մտան գոմ ու խրճիթ,  
 Ուր կապված եր մի աշառ, վորոճում եր մի կող  
 Ու գոմերը չեր տաքանում նրա նիշար չնչից :  
 Յեվ նրանց կոչը վարման, նրանց կոչը մի նոր,  
 Եւեքարական, լուսավոր, բարձր կյանքի մասին —  
 Ընդունում եր գյուղացին սիրով, տատանումով .  
 Ու անձնատուր եր յինում պայծառ եղ յերաղին :  
 Այն, ինչ կաթիլ առ կաթիլ սրսկված եր գյուղին,  
 Կուտակվել եր աննկուն, անդուլ աշխատանքով,  
 Այսոր բացել եր իր լայն, գալարավոր ուղին  
 Ու հուժկու մի շարժում եր դառել գյուղի կյանքում :  
 Շարժումն աճեց, վարարեց ու գյուղից գյուղ անցավ  
 Վորակես անդարձ մի ալիք, գարնանային հեղեղ,  
 Արմատախիլ ցնցիկ մի գարավոր անտառ,  
 Հաղարամյա կյանքն իր հին ընթացքը չեղեց :

Յեվ ոկուց անընդհատ : Ժողով : Ժողով : Ժողով :  
 Միտինդ : Չուռան : Նաղարա : Միտինդ : Ճառ : Յերգ :  
 Պարեկ :

Յուրաքանչյուր խրճիթում յուրաքանչյուր Պողոս  
 Ծնուանեկան խանդավառ տրիբուն եր դառել :  
 Յեվ նաղարով ու զուռնով, յերգով ու ծիծաղով  
 Մրցականչի գնացին գյուղերն իրար վրա :  
 Զեռքը զարկեց սեղանին մինչև անգամ Սողոն :  
 Ու վորոշեց մինչև լույս դառնալ հաստարած :  
 Գյուղիտորհրդի ժողովում հաստատ նա յերդվեց :  
 Վոր մինչև լույս Քարաշամբ գյուղը հեղաշրջեց  
 Յեվ ստեղծի այսպիսի տոկոսային թվեր,

Վոր զբնդա շըջանի ու գալատի միջին :  
 Յեվ բոլորն ել ինքնապուհ նժույզների նման  
 Պատրաստ ելին սլանալ քրտնակալած , անդուչ :  
 Դրա համար անցնելով հաճախ չափ ու սահման  
 Դիպչում ելին քարերին ճանապարհը քանդում :  
 Իսկ ճանապարհի վրա գալարիում ե թշնամին ,  
 Թույն և թափում կատաղի և ուժերը լարում  
 Փրչում և բամբասանցի ապերասան քամին  
 Քարաշամբեց մինչեւ Հոռմ և ամբողջ աշխարհում ...  
 Պրովակացիան — մի անտես , մի անմարմին սողում ,  
 Վոր խալթում ե , պղառում , թունավորում արագ :  
 Վարակվում ե մինչեւ իսկ ինքը , ընկեր Սողոն  
 Ու հաճախ միտք և անում մոլոր ու անճարակ :  
 Սակայն վորպես նախագահ ու «Հին» կուսակցական՝  
 Անհարմար ե համարում Գարսեսնին դիմել :  
 Ու դիմում ե ... Սանթրոսին (ի՞նչ անենք , վոր հակա)  
 «Մեղա կուպակցության» կրկնելով իր մտքի մեջ :

—Եղ մեր մեջ ել կմնա , արխային կաց Սողո :  
 Ել վո՞ր որվա ազգական , վոր քեղանից պահեմ ...  
 Մնացել ե մի շարաթ ... ինչ կոլեկտիվ ... ժողով ...  
 Անդիացին ե գալու ... կազրենք մարդավայել :  
 Զի յես ուզում ամեն որ , վոր «Հընկերը» հեծնի :  
 Բաս վոր առավ ու փախսէվ ... ել վո՞րաեղից ճարեմ ...  
 Նա իմ վոտով — փախչելու պատրաստություն տեսնի ...  
 Այ յորեն են հավաքում քաղաքում ամբարեն :  
 Յեկեղեցին վեր կալա՛ն ... եղ վո՞նց եր՝ յետ տովին ,  
 Թե՞ Ռիկովն եր Սոսկովից եղանակ հեռազերել :  
 Ախար սրանց փախե-փախն ընկել ե ենտեղից ,  
 Ստամինին ել արդեն վաղուց բանտ են դրել :  
 Ինքո ոկի մի վախի , տեղդ հանդիստ մնա ,  
 Յեկողները մերոնք չե՞ն ... կասեմ Կոմիտեյին .  
 Դու մեղ ինչ ես արե՞լ վոր ... ա՛յ , մեղ վառել ե նա ,  
 Են Սևանը Մանասի , թե մասսային , թե ինձ :  
 Են թուշանի քարափիս աչք են անկել գրանք ,  
 Ատամները սրել են , աքսորել են ուզում :  
 Պապնական մուլք ե զա , կյանք յեմ դրել վրան .  
 Արցոնքով եմ ձեռք բերել ... ներողություն :  
 Ախար ջան եմ մաշել հ՞ : Այ ձեռներիս մտիկ :  
 Յես իմ զուան բատրակից պակա՞ս եմ աշխատել :  
 Ունեցածից տիել եմ խեղճին , ժողովրդին  
 Ու որումս չեմ դիպել մեծավորի խաթեր :  
 Յես աշխատեմ , յես դատեմ , հարստություն գիգեմ :  
 Տամ անամոթ ծույլերին , հարբեցողներին :  
 Մի տունը լիք ընտանիք , կարիք ունեմ ես ել ,

Թո՞ղ յես ապրեմ ինձ համար , քեզ ել տամ ձրի :  
 Զեռքերս մի կապի յե՞ : Թույլ տուր հարստանամ՞ :  
 Թող շա՞տ ցանեմ , շա՞տ հնձեմ , բաժի՞նդ վերցրու :  
 Թող ունենամ , վոր տամ ե՞ , տա՞ր կե՞ր , վոր կշտանաս ,  
 Ի՞նչ ես ուզում , ել ի՞նչ ես փետուքներս ցրում :

Սանթրոսն այնպես ե խոսում , վոր կարծես թե Սողոն  
 Նրան մոտիկ դաշնակից , դավադիր և արդեն ,  
 Վորի դեմ ինքն իր սրտի զաղանիքները գեղում  
 Ու քննում ե նրա հետ ընտանեկան հարցեր :  
 Գյուղխորհուրդի նախագահն անողնական լուսմ  
 Ու տալիս ե աչքերով հավանության նշան :  
 Բարձրացնում ե միայն դիմու թասը լեցուն  
 Հանուն սիրո , հաշտության ու միության :

## Գլուխ VI

## ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Դիմումները , դիմումները , դիմումները :  
 Դրսում բուքն ե պարում նման փոխորդիք :  
 Ասես սպիտակ , անհամար գիմումներ են ,  
 Թափիվում են անվերջ եղ տմակ վոճորքեց :  
 Սարդը հյուսել ե քննում իր վոստայն :  
 Խոկ ինքը չկա : Սպասում ե թաքուն :  
 Գյուղխորհուրդ : Նստել ե ընկեր Գարսեսնը :  
 Խոկ գեմը՝ սեղանը : Հսկա թղթակույտ :  
 Դիմումներ են : Բոլորն են : Գյուղն առաջինն ե :  
 Ռւբեմն դառել ե համատարա՞ծ :  
 Բայց ո՞ւր ե , չեն գիմել Հովհանը , Լաշինը ,  
 Բւ ելի մի քանի ավարա :  
 Զաթնանց Սանթրոսը նույնական ե դիմել :  
 Սողոյի ճեռապիքն ե ... զրել ե Սողոն :  
 Մաքում բողոքում ե : Ու հետո սրտի մեջ  
 Կասկած ու յերկյուղ ե սողում :  
 Սարդը ծածկել ե փոշոտ ապակին :  
 Խոկ ինքը չկա : Սպասում ե անտես :  
 Ժապում ե Սևանը : Արդյոք չմաքրի՞ :  
 Համելի յե արդի ծրագիրը քանդել :  
 Զարմանք ե : Փախչում են Լաշինն ու Հովհանը ,  
 Խոկ Սանթրոսն ուզում ե մտնել կոլեկտիվ :  
 Կարծես թե ջրերը մի քիչ պղտորված են :  
 Այս ի՞նչ յիրելույթ ե , այս ինչ բարդ հաշիք :  
 Նստած մտածում ե ընկեր Գարսեսնը :

Յերեք հարյուր յերեսուն ընտանիք։  
 Կարո՞ղ ե արդյոք նա գտնել պատասխանը,  
 Կարո՞ղ ե այս մեծ աշխատանքը տանի։  
 Իսկ Սողոն։ Կողնի՞ վոր։ Սողոն չի՞ խափանի։  
 Ինչպես վոր արավ նա զոման ժամանակ։  
 Դյուզի կեսը հանց նա ընդդեմ Սևանի։  
 Մեանը մնաց համարյա թե մենակ։  
 Սողոն միշտ աշխատել ե Սևանին պցել,  
 Նրա գեմ ինտրիգներ սարքել։  
 Սևանն աշխատող պայքարող մի տղա յե,  
 Կուշարքերն անցավ նա Կարմիր քանակում։  
 Ազգական չունի շատ։ Գյուղում անթայֆա յե,  
 Իսկ Սողոն հեշտ ե մարդիկ հավաքում։  
 Կենարոնում հայտնի յէ Սողոյի անունը։  
 «Մասուայից սիրված, նվիրված նախաւահ»։  
 Սողոյին սիրով են։ Բռնում։ Պաշտպանում են։  
 Թայֆան մեծ ե գյուղում։ Բոլորն ազգական։  
 Մրան սանահեր ե, նրան ել քավոր ե,  
 Սեկին աներձադ ե, մյուսին փեսացու։  
 Իսկ շերտավորման ցուցակում չքավոր ե։  
 Եւ, պետք ե նրա հետ գտնել մի լեզու։  
 Գյուղի կեսը նրան— Սողոյին ե նայում։  
 Չեթե նվիրվի նա, սրտով աշխատի,  
 Կաճի կոլեկտիվը, կդառնա կայուն,  
 Թեկուղ ուժերով ել իրենց աղքատիկ։  
 Բայց Սողոն։ Կողնի՞ վոր։ Սողոն չի՞ «պայքարի»։  
 Սողոն չի՞ քայքայի կոլեկտիվ աշխատանքը։  
 Սողոն չի՞ ճանաչում ուրիշ վոչ մի կորիք,  
 Բայց իր փառքից ու յեսից սեփական։  
 Թափվում են, գալիս են ելի դիմումները։  
 Սարդը ջուսել ե վաստան ու չեա։  
 Մահում ե Սողոն։ Սաստիկ դժունել ե։  
 Այո, նա խմել ե «յերկու ստական»։  
 — Ոթ, մեռանք, — ասում ե, — քնից զարթնյինք,  
 Տեսնելինք արդեն սոցիալիզմ ե գյուղում։  
 Նստելինք հոգան ու մի լավ խմելինք։  
 Ել վոչ աշխատանք, ու վոչ ել ժաղով։  
 Ես գտնակարգային պայքարը սովանեց մեզ  
 Ես, կուլակներն ել չեն վերանում։  
 Թույլ տան՝ բոլորին կոլխոզ ընդունես՝  
 Ու Հարցը փակես դրանով։

Գողով ե։ Զեկուցում ե կենտրոնից յեկած մի յերիտասարդ։ Զեկուցումից հետո քննվում են դիմումները։ Քննվում ե Ալեքսանի դիմումը։ Սողոն Ալեքսանին դեմ ե արտահայտվում՝ ասելով, վոր Ա. Ն. Քսանը խսկավես հորից չի բաժանվել, վոր այդպիս կեղծ բաժանվածներին չի կարելի ընդունել։ Գարսեանը պաշտպանում ե Ալեքսանին և Ալեքսանն ընդունվում ե կողմոցի անդամ։  
 — Ընկեր Սողոն, ընկերներ, հարցը դրեց ուղիղ։  
 Այո, մենք չենք ընդունի կիսատ յեկողին։  
 Տեսակետը ձիշտ ե։ Բայց ընկեր Սողոն հետո  
 Խոշոր սիսալ կատարեց . . . ուղիղ տեսակետով։  
 Նա ուղրում ե չարտակը յերիտասարդ տղին։  
 Դեպի ուղին հետաղեմ, գեղի աշխարհը հին։  
 Նրա հերը չի դալիս, ծերունի յե համառ։  
 Աշխարհը չի՛ կործանվի մի ծերունու համար։  
 Բայց մենք ունենք իրավունք Ալեքսանին փանել,  
 Բաղդը կապել պատավին, ապագան սպանել։  
 Յես ընավ չեմ կասկածում Ալեքսանի վրա։  
 Ինձ հայոնի յէ մանրամաս պատմությունը նրա։  
 Նա կոլխոզի շարքերում մեզ հետ կպայքարի։  
 Զի հեռանա։ Զի փախչի կիսաճանապարհից։  
 Նա յեկել ե բանակից, նա մերվել ե մերոնց  
 Յեկ նա կարող ե դառնալ առաջավոր հերոս։  
 Նա իր հորն ել կրերի մի ժամանակ հետո։  
 Քեռի Հովհանն ել կրա իմ խոր տեսակետով։  
 Ընկեր Սողոնն թող կողուր իր եցն առաջ չանի։  
 Մենք կոլեկտիվ կնդունենք ընկեր Ալեքսանին։  
 Ինչպես ամպոտ յերկնքի կախարդական մալից  
 Արևախաչ արտերին առատ անձրեւ մաղի,  
 Այնպես աղդեց Գարսեանն ուղեղների վրա,  
 Փափկացրեց չոր կողերն ու համունց նրանց։  
 Միայն Սողոն չի ծիծեց, մեաց անդրդիւլի  
 Ըեկ իր զիծը հաստատ շարունակեց ելի։  
 Իսկ ժողովը միաձայն անցավ կողմը Սևանի։  
 Յեկ Ալեքսանը ընդունվեց ծափով ու աղմուկով։  
 Առաջանի քարափը պատկանել ե Ալեքսանի պապին՝ Բուշանին։ Զաթնանց Սանթրոսը կավթել ե նրանից այդ հողը։ Բուշանը մեռել ե Սանթրոսի բահով հասցրած վերքից։ Բուշանի ընտանիքն այն որից աղքատացել ե։

Ազակուլակացման ժամանակ կուլակաթափ են առամ նաև Զաթնանց Սանթրոսին, վորից վերցնում են

Թուշանի քարամիը և աքսորում : Կուլտակաթափման ոշա-  
խառանիներին մասնակցում և նաև Ալեքսանը, ինչի  
հետեւլուքով Զաթանանց ընտանիքն ավելի յև թշնա-  
մանում Ալեքսանի հետ :

Գևորգ V

Պառթկաց Ալեքսանն անհատակ վոխով .

Ու պատասխանեց զան ծիծաղով ,

— Ե՞յ Սանթրոս ազա, եղ վո՞նց ևս ճառում ,

Ո՞ւմ քրտինքով և վաղել քո առուն :

Ո՞ւմ պապն և ծորում քո բահով ընկել ,

Ո՞ւմ հերն և քո ևս ծառերը տնկել ,

Ո՞վ և տանջիկ շողին ու ցրտին .

Իմ պապն, իմ հերը, յես— նրանց մորդին :

Մեզնից ես իլել, յետ տուր ելի մեղ ,

Իսկ դու յետ զնա, աշխատանք ճարի ,

Տանջվիր մեղ նման սոված , կիսամերկ ,

Իմացիր մեղ պես հոգսէր ու կարիք ,

Մաքրիր մեղքերդ մի քանի տարի ,

